Դադարեցնել ԱԱԾ քննչական դեպարտամենտի և ԱԱԾ քննիչի ապօրինի գործողությունները իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի դեմ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի քննիչ Լ. Թաթոյանը ՀՀ քրեական օրենսգրքի «Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք» որակմամբ 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով, այն է՝ «Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները», որը կատարվել է «հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով» քրեական գործ է հարուցել եզդիալեզու կայքերից մեկին «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Սաշիկ Սուլթանյանի տված հարցազրույցում ներկայացված տեսակետների համար:

Սաշիկ Սուլթանյանը որպես իրավապաշտպան կազմակերպության ղեկավար իր հարցազրույցում ներկայացրել է ազգությամբ եզդի ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանվածության մասին իր տեսակետները, որը ԱԱԾ վերոհիշյալ քննիչը որակել է որպես «ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցող, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություն»:

Ինչ հիմնավորմամբ է նման եզրակացության հանգել ԱԱԾ քննիչը, հայտնի չէ:

Հայտնի չէ նույնիսկ քրեական գործի հարուցման ամսաթիվը, քանի որ հարուցված քրեական գործով ԱԱԾ քննիչը Սաշիկ Սուլթանյանին չի ներգրավել որևէ կարգավիճակով՝ կասկածյալ կամ մեղադրյալ, չնայած քրեական գործը հարուցված է հենց նրա հարցազրույցի հիման վրա, ինչի հետևանքով Սաշիկ Սուլթանյանը զրկվել է իր իրավունքների պաշտպանության դատավարական որևէ հնարավորությունից: Քրեական գործի հարուցման որոշման մասին Սաշիկ Սուլթանյանն իմացել է ԱԱԾ-ին ուղարկված իր գրությանը ԱԱԾ քննիչ Լ. Թաթոյանի պատասխանից, որում քննիչը հայտնել է քրեական գործի հարուցման և նաև դատավարական կարգավիճակ չունենալու մասին և այդ հիմնավորմամբ մերժել է քրեական գործի հարուցման մասին որոշման պատճենի տրամադրումը Սաշիկ Սուլթանյանին: Մինչդեռ Սաշիկ Սուլթանյանը հրավիրվել էր ԱԱԾ, բացատրություն էր տվել հաղորդման հիման վրա նյութերի նախապատրաստման փուլում:

Ավելին՝ ԱԱԾ քննիչը քրեական գործը հարուցել է այնպիսի անձնավորության կողմից ներկայացված հաղորդման հիման վրա, որը հրապարակայնորեն և անպատիժ ֆիզիկական բռնության սպառնալիքներով է հանդես գալիս իրավապաշտպանների և նրանց աջակիցների դեմ, հրապարակավ ապօրինի կոչեր է հղում միավորումների ազատության դեմ:

Պետությունը ստանձնել է պարտավորություններ՝ ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը, երաշխավորելու իրավապաշտպան գործունեությունը, միավորումների ազատությունը, որը պահանջում է պետության կողմից ջանքեր գործադրելու՝ ոչ միայն չխոչընդոտելու այդ իրավունքների իրականացումը, այլև կանխելու այդ իրավունքների իրականացմանը խոչընդոտող գործողությունները:

Հակառակ նշված պարտավորությունների՝ տուրք տալով ակնհայտ կեղծ տեղեկություններին և ապատեղեկատվություն տարածողներին՝ ԱԱԾ քննչական դեպարտամենտը և մասնավորապես՝ ԱԱԾ քննիչ Լ.Թաթոյանը որոշում է ընդունել՝ քրեական գործ հարուցել մարդու իրավունքների, տվյալ դեպքում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների խախտումների մասին իրավապաշտպան կազմակերպության ղեկավարի հրապարակային կարծիքի արտահայտման հիման վրա:

Ըստ էության՝ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը և ԱԱԾ քննիչ Լ. Թաթոյանը իրենց գործողություններով ոչ թե ելնում են մարդու իրավունքների ապահովման,

մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվողների դեմ ապօրինի գործողությունները կանխողի, այլ հենց ապօրինի գործողություններ կատարողներին աջակցողի դիրքերից:

Նման հիմքով քրեական գործի հարուցումը հանդիսանում է ոչ միայն իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի, այլ ընդհանրապես իրավապաշտպան գործունեության նկատմամբ պետության կողմից ակնհայտ հետապնդման փաստ, այլև՝ 2018 թ. Թավշյա հեղափոխությունից հետո իրավապաշտպան կազմակերպությունների և իրավապաշտպանությամբ զբաղվող անձանց հանդեպ հասարակության ծայրահեղ խմբավորումների կողմից ծավալված, շարունակաբար իրականացված և անպատիժ մնացած հրապարակային գործողությունների **տրամաբանական արձանագրումը**: Այդ գործողություններն ուղեկցվում են ֆիզիկական սպառնալիքների, հանրային վայրերում անհատական հետապնդումների, կազմակերպությունների գործունեությունը խոչընդոտելու, ապատեղեկատվության, ատելության խոսքի տարածմամբ: Եվ փոխանակ կանխելու նման հակաիրավական գործողությունները ժողովրդավարական և մարդու իրավունքների արժեքների և նրանց կրողների դեմ՝ ազգային անվտանգության ծառայությունը, տուրք տալով նման ծայրահեղական դրսևորումներին, հակաիրավական գործընթաց է սկսում իրավապաշտպան գործունեության նկատմամբ: Նման մոտեցումը անչափ վտանգավոր է Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության և մարդու իրավունքների հետագա ճակատագրի համար:

Դատապարտելով նման հակաիրավական, հակասահմանադրական որոշումը՝ պահանջում ենք անհապաղ դադարեցնել իրավապաշտպան գործունեության նկատմամբ հետապնդումները և ապահովել մարդու իրավունքների պաշտպանության գործունեության իրականացման անվտանգ ու երաշխավորված պայմաններ Հայաստանի Հանրապետությունում:

Հայտարարությանը միանալու համար խնդրում ենք ուղարկել Ձեր կամ Ձեր կազմակերպության տվյալները՝ communication@hcav.am էլփոստի հասցեին:

12 դեկտեմբերի 2020 թ.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Լրագրողների «Ասպարեզ» ակումբ
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն